

ՁԵԿՈՅՑ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵՆՆ

1. «Միութիւն», Մասնաշար, Շտրմանկար, Վիճակահանութիւն, եւն.
2. Միութեան անդամներու համար Յետապատուութեան իրաւունք եւ
բացառիկ առաւելութիւններ:

Կեդր. Վարչութիւնը, իր կողմէն գործող Օգնութեան եւ Բորականութիւն Յանձնաժողովին միջոցաւ, ռուսականութեան առարկայ բոլր զանազան առաջարկներ. —

1. — Սկզբունքով համամիտ գտնուելու «Միութիւն» պաշտօնաթերթը համազգային շարաքաթերթի մը վերածելու, երբ նիւթական եւ խմբագրական ղեկարութեան կարելի ըլլայ յաղթել:

2. — Որոշում կայացուց Միութեան «Մասնաշար» հրատարակելու ժողովրդական փոքր պրակ-նի բով. բարեկրթութեան, քաղաքացիական դատախազութեան. ազգային ծառայութեան, առողջապահա-կւն եւ այլ գործնական գիտելիքներու մասին. ներկայիս առ այդ հրատարակու կոչ ուղղելով մասնագէտ մտաւորականներու ազնիւ աշխատակցութեան: Այդ պրակները ըստ պարագային պիտի տրամադրուին ձեռքար կամ յոյժ ածանցակներ:

3. — Որոշեց փութալն Միութեան Շտրմանկարին կազմութիւնը, շնորհիւ այն թանկագին աշակ-ցութեան զոր խոստացած են հայ մասնագէտներ, ամողջաջանելով ցարդ ձեռք բերուած ֆիլմերը, մաս-նաւորաբար Հայաստանէ ստացուելիք ֆիլմերով:

4. — Անգամ մը եւս հաստատեց որ զանազան երկիրներու օրինական արգելքները թոյլ չեն տար կապահովելու ազգային ընդհանուր վիճակահանութիւն մը. որոնք մասին պարբերաբար տուաքարկներ երկրպագուած են, եւ որոշեց հաղորդել Միութեան Շրջ. Յանձնաժողովներուն եւ Տեղ. Մասնաժողովնե-րուն որ, ի հաշիւին համախորհրաբար որոշ շրջապայի մը յատուկ վիճակահանութիւններ կրնան կազմա-կերպել. երկրին օրէնքներուն համաձայնելով ինչպէս որ երիցս յաջող փորձը եղան Բարիզի մէջ. պա-մանաւ որ այսպիսի ծրագիրներ նախապէս կեդր. Վարչութեան հաւանութեան ենթարկուին:

5. — Տեղ. Մասնաժողովները պիտի ջանան. ուր որ գործնականապէս հնար է, համաձայնիլ տեղ-ւոյն կարեւորագոյն վաճառատուներուն եւ հաստատութեանց հետ. յօգուտ Միութեան անդամներու զեղ-չիւր ձեռք բերելու համար. ինչպէս փորձուած է Գաբիւլէի եւ Վիեննայի Մասնաճիւղներուն կողմէ:

6. — Հ. Բ. Ը. Միութեան բոլոր անդամներուն համար պիտի պատրաստուին. բացի գաղափարակ-ներէ, յարեւ նման Արժաթեայ Երեւանի տրիւն հրատարակ հանձնած խորհրդանշաններուն. անդամա-զուլման փոքր քարտեր կամ եւս տեսարկներ, որպէս վաւերաթուղթ:

7. — Միշտ նախանձախիղի Միութեան անդամներուն ընծայիլու այն յարգն ու նեցուկը զոր իրենց զոհարարութիւնը իր պարտաւորէ, Կեդր. Վարչութիւնը որոշած է օժտել զանոնք հետեւեալ առաւելութիւն-ներով:

ա) Միութեան անդամները ամէն տեղ պիտի գտնեն Մասնաճիւղներու կողմէ ընկերական սիրովոր վերաբերակներ եւ քարոյական օժանդակութիւն:

բ) Անոնք իրաւամբ պիտի օգտուին այն զեղչներէն զոր Տեղ. Մասնաժողովները պիտի յաջողին ա-պահովել տեղւոյն վաճառատուներէն եւ հաստատութիւններէն:

գ) Կարելի ամէն պաշտպանութիւն եւ դիրութիւն պիտի ընծայուի իրենց, ու եւ տեղեկութեանց, յանձնարարականներու եւ փնտաւորներու համար:

դ) Կարելիութեան սահմանին մէջ. նախապատուութեան իրաւունք պիտի ունենան Միութեան ան-դամները եւ մանաւանդ Վեթերանները. ուսանողական օժանդակութեանց առթիւ, իրենց զուակներուն հա-մար. ինչպէս նաեւ իրենց անգործութեան տաքնապի շրջանին, կարօտեաններուն յստակ նպատաւորա-մաններուն յատկացումին առթիւ:

ե) Միութեան գրասենեակներուն եւ հաստատութեանց մէջ դիւանական ռուսացական եւ այլ պաշ-տօններու համար եւս, հատաբար արժանիքի օժանդակներ, նախապատուութեան իրաւունք պիտի ունենան:

զ) Ներկայ «Միութիւն» պաշտօնաթերթի. ինչպէս եւ յառաջիկային շարաքաթերթի բաժնեգիրն 50 առ հարիւր պիտի զեղչուի Միութեան բոլոր անդամներուն համար: Բաց աստի. հրատարակելիք շարա-քաթերթի մէջ որոշ պայմաններու տակ իւրաքանչիւր անգամ ծրի ծանուցումի իրաւունք մը պիտի վայելէ:

8. — Ի նշան նշանաւորութեան. Վեթերան Անգամի տնտրուելու պիտի տրուի Միութե-ան այն վաստակաւոր անդամներուն. որ իրենց երկամայ օրինակելի ծառայութիւններով մասնաւոր զնահանքին արժանի պիտի նկատուին:

9. — Միութեան երկրամայ անդամներուն ինչպստ պիտի ռուսաւորուին նաեւ Ընկերային Օգ-նութեան Մետուկի մը ծրագիրը. որոնք որ գործնականապէս այդպիսի ձեռնարկ մը հնարաւոր ընայ ըլլալ:

Կը սիրենք յուսալ որ Միութեան հաւատարմութիւնը անդամները պիտի զնահանքին սոյն տրամադրութիւնները, որ երայրական հոգածութեան եւ փոխադարձ օգնութեան նշան եղիւմ հետզհետէ պիտի կրնան ընդլայնուիլ, եւ որ ապահովաբար Հ. Բ. Ը. Միութեան մեծ ընտանիքին քրտակցութիւնը ամ-բապնդուի պիտի ծառայեն, անոր ազնիւ անդամները իրարու կապելով աւելի ջերմ հաւատքով ու եւեւ-դով մը տողորուած:

Գ Ի Ռ Ա Ն

Բարիկ, 18 Դեկտեմբեր 1935

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՕՐԷՆՈՒԹԵԱՆ